23-ՐԴ ՆԻՍՏ

1 հոկտեմբերի 1918թ.

Նախագահում է *Ա. Սահակյանը,* որ նիստը բաց անելով՝ կարդում է օրակարգը հետևյալ կարգով.

1. Կառավարությանը վարկ բաց անելու օրինագծի հաստատումը.
2. Գետնախնձորի գնման օրինագծի քննություն.
3. Ջուլհակային աշխատանքի նախահաշիվ.
4. Գաղթ[ական] որբերի խնամատարության օրինագիծ.
5. Հաշմանդամ զինվորների միության վարչության անդամների և դիվանի ծախսերի նախահաշիվ.
6. Քաղաքի հողերը կապալով տալու օրինագիծ.
7. Տեղական ինքնավարության հանձնաժողովի զեկուցումը.
8. Բժշկասանիտարական հանձնաժողովի զեկուցումը.
9. Պետական հաշվետեսի ընտրությունը.
10. Ընթացիկ գործեր:

---

* Խոսքը կարտոֆիլի մասին է: Ծանոթ. կազմ.:

Հ. Սարգսյան - Առաջարկում է 1-ին կետը հետաձգել: Քվեարկությամբ անցնում է:

Դ.Զուբյան - Կարդում է գետնախնձորի գնման օրինագիծը, հայտարարում է, որ օրենսդրական հանձնաժողովը միայն մի հավելում է արել, այն, որ օրինագծի մեջ անուշադրության հետևանքով պակաս է մնացել այն, որ պատժի են ենթարկվում և Հայաստանի սահմաններից դուրս հանողները:

Օրինագիծն ընդունում է խորհրդարանն ամբողջությամբ:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Կարդում է ջուլհականոցի վերաբերյալ օրինագիծը, որ խորհրդարանը միաձայն ընդունում է ամբողջությամբ:

Կարդացվում է գաղթ[ական] որբերի խնամատարության վերաբերյալ օրինագիծը, որի քննության առթիվ վեճ է ծագում. *Մամիկոնյան և Տեր-Հակոբյան* առաջարկում են հետաձգել քննությունը:

Քվեարկությամբ հետաձգվում է:

Կարդացվում է օրակարգի Ե կետը. լինում են շատ թեր ու դեմ խոսողներ, գլխավորապես այն խնդրի առթիվ, որ օրինագիծը ամբողջական չէ և միայն հաշմանդամ զինվորների միության վարչության ծախքերն է պարունակում իր մեջ:

Ջոր[ական] մինիստր - Բացատրում է վարչության անհրաժեշտությունը և առաջարկում ընդունել օրինագիծը և հնարավորություն տալ՝ գործի սկիզբը դնելու:

Քվեարկության է դրվում հետևյալ բանաձևը. պահանջված 10.000 ռ. տալ և հանձնարարել մինիստրության՝ մոտ ապագայում ներկայացնել մի լրիվ օրինագիծ. անցնում է:

Հ. Ազատյան - Կարդում է քաղաքի հողերը կապալով տալու օրինագիծը և առաջարկում գյուղացիներին կապել քաղաքի հետ, վերակազմել հողային կոմիտեները, իսկ մինչև այդ՝ կազմել հաշտարար կոմիսիա քաղաքային ինքնավարությունից և գյուղացիներից: Շեշտում է խնդրի շտապողականությունը, որ ընդունվում է:

Մի շարք պատգամավորներ՝ սոց. դեմ[ոկրատներ] և էսեռներ, դատապարտում են քաղ. ինքնավարության, որ մինչև օրս հողային խնդրի առթիվ փոփոխություն չի առաջացրել և թողել է հողային հարցը այն դրության մեջ, ինչպես որ նաև կար բռնապետության օրերին:

Հ. Սարգսյան - Արդարացնում է ինքնավարության նրանով, որ պայմանները թույլ չեն տվել անել բարեփոխություններ: Այնպիսի մի ժամանակ, երբ ժողովրդի գոյության խնդիրն է եղել դրված հրապարակի վրա, քաղ. ինքնավարությունը չէր կարող հողային հարցի լուծմամբ զբաղվել: Այժմ անհրաժեշտ է անհապաղ լուծել այդ հարցը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Դեմ է այն կարծիքներին, որ քաղաքի հողերը տրվեն գյուղացիներին: Քաղաքը պիտի հողերը պահի իր ձեռքում և մշակի իր աշխատողների միջոցով:

Ս. Մամիկոնյան - Օրինագծի միտքը համակրելի է, բայց մի փոքր խնամքով չի խմբագրված, ունի մի շարք թերություններ. պետք է հետ տալ օրինագիծը հանձնաժողովին, որպեսզի լավ մշակված ձևով բերի խորհրդարան:

Տ. Մուշեղյան - Հայտնում է, որ էսեռական ֆրակցիան համաձայն է Մամիկոնյանի հետ:

Քվեարկվում և անցնում է այն, որ օրինագիծը տրվի հանձնաժողովին՝ լրացնելու և մշակելու համար:

Հ. Ազատյան - Նկարագրում է Երևանի քաղ[աքային] ինքնավարության ներկա վիճակը և առաջարկում լրացնել նոր անդամներով համեմատական սկզբունքով:

Քվեարկվում է հարցը և չի անցնում:

Բժ. Տեր-Հակոբյան - Զեկուցանում է Հայաստանի բժշկասանիտարական դրության մասին, նկարագրում զանազան վայրերի սանիտարական դրությունը, քաղաքի վիճակը և գալիս այն եզրակացության, որ մեր տերիտորիան սանիտարական տեսակետից ոչ առողջապահական է, իսկ Երևան քաղաքը՝ վտան-

գավոր: Խոլերիան համարյա թե վերջացել է մեր հանրապետության սահմաններում: Մեկ-մեկ դեպքեր լինում են, այն էլ միայն Երևանում:

Գաղթականների վիճակն առհասարակ և որբերինը՝ մասնավորապես, անտանելի է, զուրկ են, մանավանդ վերջինները, ամենատարրական միջոցներից՝ վերմակ, օթոց, հագուստ, նույնիսկ լաթեր չկան դրանց փոխարինող: Համեմատաբար տանելի է Դիլիջանի և Քարվանսարայի որբերի վիճակը: Կառավարության ուշադրությունն է հրավիրվում այն հանգամանքի վրա, որ որբերի և առհասարակ գաղթականների վերաբերյալ գործերը շատ շուտով կարգի կընկնեն:

Տ. Մուշեղյան - Բժշկասանիտարական կոմիտեն չի եղել, որ վերջացրել է համաճարակները մեր երկրում, այլ իրենք իրենց են վերջացել: Կառավարությունը որբանոցային կազմակերպություններ չի առաջ բերել, եղածները գործ չեն արել, փողոցներում դեռ էլի շարունակում են թափթփված մնալ որբերը:

Ն.Գ. մինիստր - Խնդրում է 5.000 որբի հոկտեմբեր ամսվա հասանելիք 750.000 ռ. գումարը տալ՝ անմիջապես գործադրության մեջ դնելու և շուտով որբերի վիճակը բարելավելու:

Քվեարկվում և ընդունվում է:

Պետական կոնտրոլյորի ընտրությունը որոշվեց հետաձգել: Նիստը փակվեց ժ. 12-ին:

«Զանգ», 12 հոկտեմբերի 1918թ.